ՔՆՆԱՐԿՈՒՄ ДИСКУССИИ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀՈԼՈՎՆԵՐԻ ԸՄԲՌՆՈՒՄՆ ՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Ալ. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Աշխարհաբարը կամ նոր հայերենը, որ սկզբնավորվել է XVII դարում և շուրջ 400 տարվա պատմություն ունի, ոչ թե անմիջականորեն, այլ բավական ուշ ժամանակներում է հետազոտության առարկա դարձել։ Եվ դա ինքնին հասկանալի է. աշխարհաբարի կամ նոր հայերենի ուսումնասիրությունը բոլոր դեպքերում պայմանավորվել է նրա զարգացման ընթացքով ու ատտիճանով, ժողովրդի հասարակական-տնտեսական կյանքում ձեռք բերած կշռով և առաջադրած պահանջներով։ Ըստ այդմ էլ աշխարհաբարը, եթե իբրև այդպիսին, XVII դարում է սկզբնավորվել ու սկսել զարգանալ, ապա նրա կանոններն ու օրենքները բացահայտող գիտությունը՝ քերականությունը, ծնունդ է առել գրեթե մեկ դար հետո։

Եվ իսկապե՛ս. աշխարհաբարի կամ նոր հայերենի առաջին քերականությունները, որ երկուսն են, ստեղծվել են XVIII դարում. նրանցից մեկը հոլանդացի հայագետ Յոհան Յոախիմ Շրյոդերի (1680—1756)՝ գրաբարին նվիրած «Արամեան լեզուին գանձ» („Thesaurus linguae armenicae“) *լատիներեն աշխատության մի փոքր՝ «Քաղաքացիական հայոց լեզվի նկարագիրը»* („Synopsis linguae civilis armenorum“) *խորագրով հատվածն է*[1]*. մյուսը Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացու «Դուռն քերականութեան Աշխարհաբառ լեզուին հայոց» աշխատությունն է, որ շարադրված է «տաճկականաւ լեզուաւ առ ի յօգուտ այնց հայոց, որք զտաճկական լեզու միայն գիտեն, և փափաքին ուսանիլ զաշխարհաբառ հայերէն»*[2]*։*

Երկու հեղինակներն էլ ըստ կարելվույն նկարագրելով աշխարհաբարը՝ ի շարս այլ իրողությունների անդրադարձել են նաև հոլովներին և փորձել ցույց տալ նրանց իրական պատկերը։

Յ. Շրյոդերը, գտնելով, որ գրաբարում «Անունների հոլովները տասն են („Casus nominum sunt decem“)—*Անուանական* (Nominativus), *Սեռական* (Genitivus), *Տրական կամ Դիմողական կամ Խաշխողական* (Dativus sive Inceremanti sive Praefixi), *Հայցական* (Accusativus), *Կոչական* (Vocativus), *Առողական* (Ablativus), *Պատմական* (Narrativus), *Ներգոյական* (Commorativus), *Գործիական* (Instrumentalis), *Շրջակայական* (Circumlativus)[3], *ճիշտ այդ նույն անուններով քաղաքացիական (իմա՛ նոր) հայերենում ևս տասը հոլով (և ոչ թե՝ հինգ, ինչպես կեղծումով ոմանք են ասում) է ընդունել։ Այսպես՝ «Հոլովները,—գրում է նա,—ժողովրդական քաղաքացիական լեզ-*

---

[1] Joh. Joachimi Schröderi. Thesaurus linguae armenicae—*Արամեան լեզուին գանձ. Ամստերդամ, 1711, էջ 303—321։*

[2] *Մխիթար Սեբաստացի. Դուռն քերականութեան Աշխարհաբառ լեզուին հայոց. ի Վէնետիկ, 1727, էջ 3։*

[3] Joh. Joachimi Schroderi. Thesaurus linguae Armenicae, p. 56.

վում ոչ մի նախամասնիկ չեն ստանում, ուստի և՝ Անվանականը, Հայցականը և Կոչականը. Սեռականը և Տրականը, Առողականը և Պատմականը, Գործիականը և Շրջակայականը՝ միատեսակ, Ներգոյականն էլ միայն իրեն հատուկ, վերջավորություն են ունենում („Casus in vulgari civili sermone praefixa nulla adfumunt. Hinc Nominativus, Accusativus et Vocativus. Genitivus et Dativus. Ablativus et Narrativus. Instrumentalis et Circumlativus unam et eandem. Commorativus vero solus suam sibi propriam, terminationem habent")[4].

Դրան համապատասխան էլ Ց. Շրյոդերը ներկայացրել է գոյականների հոլովման հարացույցը՝ միատեղ կամ նույն գծի վրա նշելով ձևով նման հոլովները, ինչպես՝

Անուան. Հայց. և Կոչ. (Nom. Acc. et Voc.)	—մին ձուկն
Սեռ. և Տրակ. (Genit. et Dat.)	—Մին ձկնի
Առող. և Պատմ. (Abl. et Narrat)	—մին ձկանէ, մեկ ձկնէ, ձկնից
Ներգոյական (Commorativus)	—մին ձկնում
Գործ. և Շրջակ. (Instr. et Circuml)	—մին ձկնով:

Դերանունների դեպքում, սակայն, մասամբ շեղվելով այդ համակարգից՝ Ես (ego) *դերանունը, օրինակ, ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվում նա ներկայացրել է յոթ հոլովով՝*

	Եզակի	Հոգնակի
Անվան. (Nom.)	*ես*	*մենք*
Սեռ. (Gen.)	*իմ*	*մեր*
Տրակ. (Dat.)	*ինձ*	*մեզ*
Հայց. (Acc.)	*զիս կամ ինձ*	*զմեզ կամ մեզ*
Առող. (Abl.)	*ինձանէ կամ ինձնէ կամ ինձնից*	*մեզանէ կամ մեզնէ կամ մեզնից*
Ներգ. (Com.)	*ինձնում*	*մեզնում*
Գործ. (Instr.)	*ինձնով*	*մեզնով*[5]։

Եվ, այնուհանդերձ, Ց. Շրյոդերը չի կարողացել ազատվել գրաբարի նախորդ քերականների ու լատինաբանների ազդեցությունից և կաշկանդված է մնացել դրա կապանքներում։ Այլ կերպ է վարվել Մխիթար Սեբաստացին։ Առաջինը նա է հաղթահարել այդ կապանքները և առաջինն էլ նշել, որ արևմտահայ աշխարհաբարում հոլովները 6-ն են՝ ինչպես, օրինակ՝

	Եզակի	Հոգնակի
Ուղղական	— *հաց, ագարակ*	*հացեր, ագարակներ*
Սեռական	— *հացի, ագարակի*	*հացերու, ագարակներու*
Տրական	— *հացին, ագարակին*	*հացերուն, ագարակներուն*
Հայցական	— *հացը, ագարակը*	*հացերը, ագարակները*
Բացառական	— *հացէն, ագարակէն*	*հացերուն, ագարակներուն*
Գործիական	— *հացով, ագարակով*	*հացերով, ագարակներով*[6]։

4 *Նույն տեղում, էջ 307։*

5 *Նույն տեղում, էջ 310։*

6 *Տե՛ս Մ. Սեբաստացի. նշվ. աշխ., էջ 9։*

Այդպես է և նա ներկայացրել մի շարք գոյականների (թուղթ—թղթեր, գետին-գետիններ, դէզ-դիզեր, հնարագէտ-հնարագիտներ, հաւ-հաւեր, ցուրտ-ցուրտեր, դուռն-դռներ, հայր-հարեր, օր-օրեր), դերանունների (օր.՝ եզակի ուղղ. ով, որ, սեռ. որու, տրա. որու, ում, հայց. ով, բաց. յումէ, գործ. որով—հոգնակի ուղղ. որոնք, սեռ. տրա. որոնց, հայց. որոնք, բաց. որոնցմէ, գործ. որոնցով, եզակի ուղղ. դու, սեռ. քոյ, տրա. քեզ կամ քեզի, հայց. զքեզ, բաց. քէնէ, գործ. քեզմով—հոգնակի ուղղ. դուք, սեռ. ձեր, տրա. ձեզ կամ ձեզի, հայց. զձեզ, բաց. ձէզնէ, գործ. ձեզմով և այլն), փոխանունների (օր.՝ ուղղ. ուտող–ուտողներ, սեռ. ուտողի–ուտողների, տր. ուտողին–ուտողներուն, հայց. ուտողը–ուտողները, բաց. ուտողէն–ուտողներուն, կոչ. ո՛վ ուտող–ո՛վ ուտողներ) հոլովումը[7]։

Սեբաստացու պատկերած հոլովական համակարգը, անշուշտ, լիակատար չէ և իր թերի ու պակասավոր կողմերն ունի. օրինակ՝ բոլորովին էլ հիմնավոր չէ, որ նա ուղղականը առանց որոշյալ հոդի, հայցականը, ընդհակառակն, որոշյալ հոդով, բացառականը եզակի թվում՝ -էն վերջավորությամբ, իսկ հոգնակի թվում՝ -ուն-ով, ենթակայական դերբայը առանց գործիականի և կոչականով (ո՛վ ուտող-ո՛վ ուտողներ) է ներկայացնում։

Դա, որ մասամբ նույն այդ շրջանում արևմտահայ աշխարհաբարի տակավին հեղհեղուկ, վերջնականապես լրիվ ձևավորված չլինելու հանգամանքով է բացատրվում, բնավ չի նսեմացնում այն ծառայությունը, որ մատուցել է Մ. Սեբաստացին հայ քերականագիտությանը աշխարհաբարի հոլովների լուսաբանման բնագավառում։

Բոլոր դեպքերում հայ քերականության պատմության մեջ առաջինը նա է իսկապես ճշտորեն որոշել արևմտահայ աշխարհաբարի հոլովները՝ իրենց հարացույցով, որը և ընդունվել է հետագայում և արտացոլում գտել արևմտահայերենին վերաբերող բոլոր քերականական ու լեզվաբանական աշխատություններում։

3. Շրյոդերին և Մ. Սեբաստացուն հաջորդող հեղինակը, որ քննել է աշխարհաբարի կամ նոր հայերենի հոլովները, հայ մեծ լուսավորիչ-դեմոկրատ Խ. Աբովյանն է։ Իր «Նախաշաւիղ ի պէտս նորավարժից» աշխատության երկրորդ մասում, որ գրաբարի և աշխարհաբարի յուրատեսակ զուգադրական քերականություն է, նա միանգամայն ճշտորեն է ըմբռնել ու բնութագրել հոլովի քերականական կարգը[8]։

Հոլովումը՝ անունների փոփոխության ամբողջական համակարգը, իսկ հոլովը նրա յուրաքանչյուր ձևը կամ «ամեն մի կերպը» համարելով՝ Խ. Աբովյանը այդ տեսանկյունից էլ քննել է հայոց լեզվի հոլովներն ընդհանրապես, և հետաքրքիր ու արժեքավոր վերլուծություններ կատարել ոչ միայն գրաբարի ու աշխարհաբարի հոլովական ձևերը իրար հետ համեմատելու, նրանց առանձնահատկությունները նշելու, այլև հոլովի, իբրև քերականական ուրույն կարգի, էությունը բացատրելու տեսակետից։ Ըստ այդմ էլ նա դուրս է եկել քերականական ավանդական որոշ ըմբռնումների դեմ և յուրաքանչյուր հոլով որոշելիս հենվել ոչ միայն ձևի, այլև գլխավորապես նրա արտահայտած իմաստի վրա։ Այսպես՝ նշելով գրաբարի հոլովների կազմության ձևերը, այն, որ «Տրականի վրա մեկ ի կամ յ պետք է դնել՝ որ լինի ներգ., բաց. վրա մեկ զ պետք է դնել՝ որ լինի պատ., և գործ. վրա մեկ զ՝ որ լինի պար.: Հոգնակին էլ ուղ. հայց. կոչ. և ներգ. իսպառ մի են, միմիայն ք>ս է փոխվում։ Սեռ. տր. բաց. և պատ. մի են վերջավորությամբ։ Ինչպես էլ գործ. և պար.»[9], նա, այնուամենայնիվ, Մ. Չամչյանի և Մ. Սալլանթյանի հակառակ

---

7 Տե՛ս նույն տեղում, էջ 29—36, 76—77։

8 Տե՛ս այդ մասին Ալ. Մարգարյան. Խաչատուր Աբովյանը և աշխարհաբարը. Երևան, 1958, էջ 80—82։

9 Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 5, Երևան, 1950, էջ 126։

պտնում է, որ «գրաբար լեզվի հոլովներն էլ էնքան շատ չեն, ինչպես որ կարծում են»[10]։ Ճիշտ է, հոլովների շարքում Աբովյանը շարունակում է թվարկել նաև պատմականը, պարառականը և կոչականը, բայց դա արվում է սոսկ մեթոդական-մանկավարժական նկատառումներով և երբեք չի բխում հոլովների մասին նրա ունեցած որոշակի սկզբունքից. մի սկզբունք, որի արժեքն էլ հենց այն է, որ Աբովյանը հաշվի է առնում հոլովական ձևի և իմաստի անխզելի կապը և այդ հիման վրա գտնում, որ, ասենք, սեռականը «ցույց է տալիս՝ թե մեկ բան ումն ա, զորօրինակ՝ Աշակերտի գիրը»[11], հայցականը ցույց է տալիս, թե «ի՞նչ բանի վրա» է «գործողությունը անցնում»[12], գործիականը այն առարկան, «ընչով որ մեկ գործ կատարում են»[13], «Տրական հոլովն էն ժամանակն է ասվում, երբ հարցնում ենք, թե ո՞ւմ տվիր, ում ասացիր, ում պատահեցիր և այլն»[14], «Ներգոյական հոլովումն դրվում են էն բառքը՝ որ մեկ գործողության տեղր և ժամանակն են ցույց տալիս և կարելի է հարցանել ումնո՞ւմ, ընչո՞ւմ»[15] և այլն։ Այսպիսով՝ Աբովյանը կարողանում է հանգել այն ճիշտ եզրակացության, որ «Աշխարհաբառ լեզուն մեր յոթն հոլով ունի»[16]. ուղղական (օրինակ՝ Երեխայն ծիծաղեցավ), սեռական (օրինակ՝ Երախայի հայրը հիվանդ ա), տրական (օրինակ՝ Երախային ասացի), հայցական (օրինակ՝ Երեխային սիրում եմ), բացառական (օրինակ՝ Երախայիցն առացա), գործիական (օրինակ՝ Երախայովը էս բանը արի), ներգոյական (օրինակ՝ Երախայումը շատ շնորք կա). «Որպես տեսնում ենք,— գրում է Աբովյանը,—Երեխա բառը աշխարհաբառումը յոթն կերպ փոփոխվեցավ, ամեն էս մեկ կերպին հոլով են ասում, հոլովել նշանակե՝ պտուտ դալ, որպես թե բառը պտուտ է գալիս, երբ իր առաջին նշանակությունումը չի մնում»[17]։

Նա նույն այդ սկզբունքով է մեկնաբանել նաև դերանունների հոլովումը, պարզ ու որոշակի նշել, որ նրանց հոլովները նույնպես 7-ն են[18], ինչպես՝

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	ես, դու, սա	մենք, դուք, սրանք
Սեռ.	իմ, քո, սրա	մեր, ձեր, սրանց
Տր.	ինձ, քեզ, սրան	մեզ, ձեզ, սրանց
Հայց.	ինձ, քեզ, սրան	մեզ, ձեզ, սրանց
Բաց.	ինձանից, քեզանից, սրանից	մեզանից, ձեզանից, սրանցից
Գործ.	ինձանով, քեզանով, սրանով	մեզանով, ձեզանով, սրանցով
Ներգ.	ինձանում, քեզանում, սրանում	մեզանում, ձեզանում, սրանցում։

Այսպիսով՝ Խ. Աբովյանը մի կողմից եթե միանգամայն իրավացիորեն նկատել է, որ «գրաբար լեզվի հոլովներն էլ էնքան էլ շատ չեն, ինչպես որ կարծում են», ապա մյուս կողմից՝ ավելի խորն է լուսաբանել աշխարհաբարի հոլովները՝ գիտականորեն հիմնավորելով, որ դրանք իրո՛ք 7-ն են։

Այստեղ արժե հիշել և ժամանակի նշանավոր լեզվաբան Ք. Պատկանյանին, որը նույնպես մերժելի է համարել գրաբարի 10 հոլովի տեսակետը և

10 Նույն տեղում, էջ 125։

11 Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, էջ 125։

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում, էջ 126։

14 Նույն տեղում, էջ 125։

15 Նույն տեղում, էջ 126։

16 Նույն տեղում, էջ 125։

17 Նույն տեղում։

18 Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս մեր «Խաչատուր Աբովյանը և աշխարհաբարը», էջ 85—90։

ուղղակի նշել, որ «Հոլովների թվի որոշման հարցում հայ քերականները համաձայն չեն իրար հետ։ Ոմանք ընդունում են հինգ (տե՛ս Rivola, տե՛ս Peterm. Gram. ling. Arm., էջ 57), ուրիշները՝ վեց (տե՛ս Dion Thrax, էջ 34), յոթ ութ, ինն և նույնիսկ՝ տասը (Schröeder, Thesaur. ling. Arm. Эмин. Грамм. Арм., стр. 10—14, Бероев—Начальн. основы гайканск. языка. էջ 36) հոլով։ Մեր կարծիքով Հայկազյան լեզվի (իմա՛ գրաբարի—Ա. Մ.) հոլովների թիվը ամենից լավ որոշել են Մխիթարյան երկու գիտնականներ՝ Ավետիքյանը և Արսեն Բագրատունին (...)։ Նրանց կարծիքով հայոց լեզվում հոլովները միայն վեցն են՝ ուղղական, սեռական, տրական, գործիական, բացառական և հայցական։ Դրանցից միայն սեռականը և գործիականը ունեն իրենց հաստատուն թեքույթը (постоянную флексию)։ Տրականը, սակավ բացառություններով հատկապես դերանուններում, դրեթե միշտ նման է սեռականին»[19]։

Ք. Պատկանյանը թեև առանձնապես չի խոսել նոր հայերենի հոլովների թվի մասին, բայց ակներև է, որ ընդունել է հիշյալ և նաև՝ ներգոյականի գոյությունը նրանում։

Որոշ փաստերից ելնելով՝ պետք է ասել, որ Մ. Նալբանդյանը ևս հոլովները հայերենում ընդհանրապես՝ 6, իսկ արևելահայերենում 7-ն է համարել։ Այսպիսով՝ քանի գնում, այնքան էլ առաջ է տարվում ու հարստանում հայերենի հոլովների ուսմունքը՝ ավելի պարզ լուսաբանություն գտնելով ամենից առաջ XIX դարի շատ նշանավոր լեզվաբան Արսեն Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության մեջ։

Հոլովը անվան քերական կարգերից մեկը համարելով՝ Ա. Այտընյանը այն որոշում է բառի կրած փոփոխությամբ և ասում. «Հոլով կամ խոնարհում կըսվի բառի մը ետքի ծայրի փոփոխությունները։—Անվանցն ու դերանվանցը կըսվի Հոլով, իսկ բայերունը՝ Խոնարհում»[20]։

Ըստ բառի կրած փոփոխության կամ վերջավորության որոշելով հոլովը՝ Այտընյանը չի անտեսում, իհարկե, նրա արտահայտած իմաստը, որոշակիորեն տարբերում է ձևով նման հոլովները՝ ուղղականն ու հայցականը, սեռականն ու տրականը իրարից, գտնում, որ արևմտահայերենում հոլովները 6-ն են։ Այսպես՝ նա գրում է. «Ըսինք թե անունը խոսքի մեջ երբեմն Մարդ, երբեմն Մարդու, երբեմն Մարդէ ըսելով՝ փոփոխություններ կառնու, և թե՝ այս փոփոխությունս Հոլով կկոչվի։ Արդ՝

Հոլովները վեց հատ են. 1. Ուղղական («Մարդ եկաւ»), 2. Հայցական («Մարդ տեսայ»), 3. Սեռական («Մարդու պատկեր»), 4. Տրական («Մարդու կը նմանի»), 5. Բացառական («Մարդէ առի»), 6. Գործիական («Մարդով խաւրեցի»)[21]։ Իր քերականության մեջ Ա. Այտընյանը այդպես՝ 6 հոլովով է ներկայացրել՝ և՛ տարբեր հոլովումների պատկանող գոյականների (օր.՝ ծառ-ծառի, ծեր-ծերու, օր-օրուան, տէրութիւն-տէրութեան, այլև՝ գինի-գինւոյ, հայր-հօր, քոյր-քրոջ), և՛ դերանունների (օր.՝ ուղղ. ես—մենք, մեք, հայց. գիս, իս, ինծի-զմեզ, մեզ, մեզի, սեռ. իմ, իմին-մեր, մերին, տր. ինձի, ինծի-մեզի, բաց. իզմէ, ինէ-մեզմէ, մենէ, գործ. իզմով-մեզմով) հոլովումը։

Երկու դեպքում էլ արևմտահայերենում 6 հոլով ընդունելով՝ Ա. Այտընյանը՝ ա) ճշտորեն է պարզաբանել անվան և դերանվան հոլովական ձևերի կազմությունը, նրանց՝ միմյանց նկատմամբ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները։

---

19 К. Патканов. Исследование о составе армянского языка. СПб., 1864, с. 29—30.

20 Ա. Այտընյան. Քննական քերականութիւն Աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի. Վիեննա, 1866, էջ 4։

21 Նույն տեղում, էջ 6։

բ) Տարբերել է ուղիղ և թեք, հատկապես ձևով նման, հոլովները, նշել նրանց գործառույթները՝ ասելով, օրինակ. «Ուղղական հոլովը կա՛մ ան է, որն որ կրնե կամ որն որ կրլլա (անուն բայի), և կա՛մ ան է, ինչ որ անուն-բային կրլլա (խնդիր բնության)։

Հայցականը կա՛մ ան է, զորն որ անուն-բային կրնե (խնդիր սեռի) և կա՛մ ան՝ ինչ որ խնդիր սեռին կրլլա («հայցական խնդիր-բնության»)[22], *«Սեռական հոլովը բայի խնդիր չէ՝ այլ անվան»*[23], *«Տրական խնդիր-բնության կառնուն բայերը»*[24], *«Սեռական հոլովը տրականեն զանազանելու դյուրին կերպն աս է.—եթե գոյականի վրա ինկած է՝ սեռական է, իսկ եթե բայի վրա՝ տրական է։ Այսպես սեռական է՝* ոսկւոյ *նմանութիւն.* բարեկամի մը *յանձնարարութիւն, տրական է՝* ոսկւոյ *նմանիլ.* բարեկամի մը *յանձնեցի»*[25],

գ) Խոսել է հոլովների հոդառության մասին և, իբրև ընդհանուր կանոն, նշել, որ «Ա. Ուղղականն ու հայցականը միշտ և ամեն դեպքի մեջ հոդ կառնունի Բ. Գործիականը միշտ և ամեն դեպքի մեջ առանց հոդի կմնա և անորոշին հետ նույն է։ Գ. Սեռականը, տրականն ու բացառականը երբեմն կառնուն հոդ և երբեմն չեն առնուր»[26],

դ) Ներկայացրել է կապերի խնդրառությունը և հիմնականում ճիշտ որոշել, թե հոլովի (սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և նաև՝ ուղղական) հետ ի՛նչ կապ կամ կապեր են գործածվում[27]*;*

ե) Սեռական հոլովը կարևոր է համարել հոլովման տեսակները որոշելու համար՝ ասելով. «Հոլովում չորս տեսակ է, որ եղակի սեռականեն կորոշվի կամ կճանչցվի»[28]*։*

Այս բոլորից բացի, որ առավել կարևոր է, Ա. Այտընյանը առաջինն է մատնանշել հին հայերենի՝ գրաբարի, և նոր հայերենի՝ աշխարհաբարի հոլովների սերտ աղերսները, կապերն ու հարաբերությունները և հենց այս տեսանկյունից էլ ներկայացրել նրանց իրական պատկերը ոչ միայն արևմտահայերենում, այլև արևելահայերենում։

Փաստերով հավաստելով, որ դեռևս վաղ անցյալում այնպես է պատահել, որ ուղղականն ու հայցականը ձևով նմանվել են իրար, որ «ի սկզբանե հին ատեններն ի վեր կար բնտանեկան լեզվին մեջ... f *վերջով հոդ. հայցականը։ Անգիր ժամանակներեն՝* ՁՄԼջf *օրհորդին։* Ջ *և* Է *դարերուն մեջ շատ ավել հաճախ* զպպաստւորf. զվաճfճ. զեւթճեfեաճճ. Աղօթf *առնել»*[29], *Այտընյանը դրանք ոչ թե մեկ, այլ տարբեր հոլովներ է համարել՝ տարբեր հոլովական նշանակություններ կամ հարաբերություններ արտահայտելու համար։*

Գտնելով, որ «Գրաբար հայերենի անվանց գլխավոր հոլովներն յոթն են. Ուղղական, Սեռական, Հայցական, Տրական, Բացառական, Գործիական, Ներգոյական»[30], *Ա. Այտընյանն ուրվագծել է դրանց զարգացման ընթացքը, ցույց տվել, թե ժամանակի ընթացքում նրանք ի՛նչպիսի փոփոխություններ են կրել և ի՛նչ պատկեր են ներկայացնում արևմտահայերենում և արևելահայերենում։ Ընդ որում՝ նա միանգամայն ճշտորեն է նկատել ու նշել, որ արևելյան աշխարհաբարում «Անվանց ու դերանվանց հոլովմանը մեջ առաջին աչքի զարնող հատկությու՛ն է՝ բացառականն ու ներգոյականը», որոնցից առաջինն էլ եթե գրաբարին ու արևմտահայերենին հատուկ է հոլովակերտ մասնիկի*

---

22 Նույն տեղում, էջ 173։
23 Նույն տեղում, էջ 158։
24 Նույն տեղում, էջ 1ձ9.
25 Նույն տեղում, էջ 148։
26 Նույն տեղում, էջ 24։
27 Տե՛ս նույն տեղում, էջ 119—124։
28 Նույն տեղում, էջ 6։
29 Նույն տեղում, էջ 17։
30 Նույն տեղում, էջ 431։

փոխարեն արտահայտվում է -ից -ով և -ուց -ով, որ սերում են «գրաբարի ից և ուց հբ. հոլովական վերջավորություններից», ապա «Ներգոյական հոլովը եզ. և հքն. համասարապես ում վերջով է»[31], որ սերում է նախդրիվ տրականից և գալով նույնպես վաղ անցյալից՝ բազմիցս է հանդիպում գրավոր աղբյուրներում, ինչպես, օրինակ՝ ի ճնումն>հնում, ի հինգերորդում> հինգերորդում, ի քաղաքում>քաղաքում, ի մարդում>մարգում և այլն[32]։

Այսպիսով՝ գիտական-տեսական հիմնավորումներով Ա. Այտընյանը եթե արևմտահայ աշխարհաբարի կամ արևմտահայ գրական լեզվի համար՝ 6, ապա արևելահայ աշխարհաբարի կամ արևելահայ գրական լեզվի համար 7 հոլով է ընդունել՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական հերթականությամբ ու հարացույցով։

Դա նա շատ ավելի պարզորոշ ցուցադրել է «Քննական քերականության...» տեսական՝ «Նախաշավիղ» բաժնում՝ նշելով, որ «Քանի մը հոլովման օրինակներ տվելի պայծառ դիտել կու տան այս լեզվին կազմությունը։

Եզակի	Մարդ.	Արին	Գիւղացի	Երեխայ-ն.
Ու. Հ.	Մարդ	Արին	Գեղցի	Երեխէն
Ս. Տ.	Մարդի	Արնի	Գեղցու	Երեխին
Բցռ.	Մարդից	Արնից	Գեղցուց	Երեխիցը
Գրծ.	Մարդով	Արնով	Գեղցով	Երեխովը
Ներգ.	Մարդում	Արնում	Գեղցում	Երեխումը
Յոգնակի				
Ու. Հ.	Մարդեր	Արներ	Գեղցիք	Երեխէքը
Ս. Տ.	Մարդերի	Արների	Գեղցոնց	Երեխէքանցը
Բցռ.	Մարդերից	Արներից	Գեղցոնցից	Երեխէքանցիցը
Գրծ.	Մարդերով	Արներով	Գեղըցքով	Երեխէքովը
Ներգ.	Մարդերում	Արներում	Գեղըցքում	Երեխէքումը

	Եզ. Սա	Յք. Սոքա	Եզ. Այս	Յք. Այսոքիկ
Ուղ.	Սա	Սրանք	էս	էստունք
Սեռ.	Սրա	Սրանց	էստուր	էստունց
Տ. Հ.	Սրան	Սրանց	էստուր	էստունց
Բցռ.	Սրանից	Սրանցից	էստուրնից	էստունցից
Գրծ.	Սրանով	Սրանցով	էստով	էստունցով
Ներգ.	Սրանում	Սրանցում	էստում	էստունցում»[33]։

Բերված բառերը, ճիշտ է, հոլովված են հիմնականում խոսակցական լեզվին, առավելապես՝ Արարատյան բարբառին հատուկ ձևերով, բայց բոլոր դեպքերում ակներև են դարձնում արևելահայերենի հոլովական կազմությունը, ցույց տալիս, որ թե՛ գոյականների, թե՛ դերանունների հոլովները 7-ն են։

Այսպիսով էլ, բնականաբար, ամուր հիմքեր են ստեղծվել հետագայում արևելահայ աշխարհաբարի կամ արևելահայ գրական լեզվի հոլովական համակարգի ավելի խոր ու ամբողջական լուսաբանության համար։ Եվ պետք է ասել, որ դա առաջին հերթին վիճակվել է ժամանակին փայլուն կրթություն

---

31 Նույն տեղում, էջ 195։

32 Այդ մասին տե՛ս, օրինակ, մեր «Հայերենի հարադիր բայերը», Երևան, 1966, էջ 474—475։

33 Ա. Այտընյան. Քննական քերականություն..., էջ 198։

ստացած, բարձրակարգ մտավորական, լեզվաբան, պատմաբան Ստ. Պալասանյանին (1837—1889), որը Փարիզի Մուրադյան վարժարանում ուսանելուց (1852—1855), Թեոդոսիայի, Նոր Նախիջևանի դպրոցներում աշխատելուց հետո՝ 1863 թ. տեղափոխվել է Թիֆլիս, զբաղվել մանկավարժական ու գիտական գործունեությամբ։

Թիֆլիսում նա զբաղվել է արևելահայ աշխարհաբարի կամ արևելահայ գրական լեզվի ուսումնասիրությամբ՝ հրատարակելով 1870-ին «Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց», իսկ 1874-ին՝ «Քերականություն մայրենի լեզվի» աշխատությունները, որոնցից վերջինն էլ, իբրև դպրոցական դասագիրք, քանիցս վերահրատարակվել է և բավական մեծ դեր խաղացել մայրենի լեզվի ինչպես ուսուցման, այնպես էլ ամրակայման ու զարգացման գործում։

Նույն այդ երկու աշխատություններում էլ Ստ. Պալասանյանը քննել է արևելահայ գրական լեզվի հոլովները և տվել նրանց ճշգրիտ բնութագիրը։

Գտնելով, որ «Նոր լեզուն դեռ իր օրորոցի մեջն է և զարգանալու ու մշակվելու կարոտ»[34], Պալասանյանը, ինչպես նրա այլ քերականական իրողությունները, այնպես էլ հոլովները քննելիս մի կողմից չի անտեսել հայ լեզվաբանական-քերականագիտական մտքի անցյալի նվաճումները, մյուս կողմից՝ հիմնականն է ունեցել այդ՝ «օրորոցի մեջ» գտնվող և «զարգանալու ու մշակվելու կարոտ» լեզուն, կարևոր ու էական համարել «նորա հիմնական օրենքների» բացահայտումը։

Այսպես՝ նա հատուկ կերպով շեշտել է, որ «Որովհետև եթե մենք ընդունում ենք նոր հայերենի գոյությունը, չենք կարող ժխտել նորա հիմնական օրենքների գոյությունը, որոնք առանձին բնավորություն ու կերպարանք են տալիս նորան, հետևաբար ոչ ոք իրավունք ունի (իմա չունի—Ա. Մ.) ձեռնամերձ լինել այդ օրենքներին»[35]. կամ՝ «Ինչպես որ անհնարին է փոխել այն օրենքները, որով կատարվում է արյան շրջանառությունը, կամ մի մատ ավելացնել մեր հասակին, այնպես անկարելի է փոխել լեզվի օրենքները կամ մեր ազատ կամքով նոր բառեր հնարել»[36]։

Առաջնորդվելով այդ սկզբունքով՝ Ստ. Պալասանյանը ավելի հիմնավոր կերպով ապացուցել է, որ «Նոր հայերեն լեզուն ունի յոթը հոլով, որ են. Ուղղական, Հայցական, Սեռական, Տրական, Բացառական, Գործիական և Ներգոյական, որոնք զանազանվում են միմյանցից առանձին նշանակությամբ և վերջավորությամբ (ընդգծումն իմն է—Ա. Մ.). միայն սովորական հարցման մեջ հայցականը ուղղականի նման է և տրականը սեռականի նման»[37]։

Այսպիսով՝ Խ. Աբովյանի, Ա. Այտընյանի պես Ստ. Պալասանյանը ևս հոլովները որոշել է նրանց ինչպես ձևով, այնպես էլ ընդհանուր նշանակությամբ կամ բովանդակությամբ։

Բայց առաջ գնալով՝ նա միաժամանակ հոլովները դիտել է իբրև արտաքին աշխարհի առարկաների երևույթների, եղելությունների միջև իրապես դրսևորվող կապերի ու հարաբերությունների արտահայտման կարևոր միջոց՝ ասելով. «Բնության մեջ բոլոր առարկաները միմյանց հետ կապակցություն և հարաբերություն ունին...։ Լեզուն երկու միջոց ունի այդ հարաբերությունները բացատրելու. 1) բառերի վերջավորությունները փոփոխելով և 2) բառերի սկիզբը այլևայլ մասնիկներ գործ դնելով, որոնք կոչվում են նախդիր»[38]։

Սա էլ պարզորոշ վկայում է, որ Ստ. Պալասանյանը հոլովների որոշման հիմնական հիմունքը համարել է այն, թե առարկաները «ինչ հարաբերու-

---

34 Ստ. Պալասանյան. Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց. Թիֆլիս, 1870, էջ 2։

35 Նույն տեղում, էջ 3։

36 Նույն տեղում, էջ 3։

37 Նույն տեղում, էջ 23։

38 Նույն տեղում, էջ 22—23։

թյուններ ունին միմյանց հետ»[39], և ըստ այդմ էլ նշել, որ «այդ հարաբերությունները պարզ երևում են գլխավորապես գոյականների վերջին ծայրը ավելացրած աննշան մասնիկներից կամ վերջավորություններից»[40], կամ՝ «Առարկաների միջև եղած հարաբերությունները ցույց տալու համար անունները իրանց վերջավորությունները փոխում են, և այդ փոփոխությունները քերականության մեջ կոչվում են հոլով»[41]։

Այս տեսանկյունով քննելով արևելահայ գրական լեզվի հոլովները՝ նա ինքնուրույն ու առանձին հոլովներ է համարել ոչ միայն պարզ վերջավորությամբ ձևավորվող և հեշտորեն տարորոշվող բացառական (օր.՝ քաղաքից, այգուց), գործիական (քաղաքով, այգով) և ներգոյական (քաղաքում, այգում), այլև այն հոլովները՝ ուղղականն ու հայցականը, սեռականն ու տրականը, տրականն ու հայցականը, որոնք ձևով չեն տարբերվում, բայց տարբեր հարաբերություններ են արտահայտում և, բնականաբար, նույնպես ինքնուրույն, լիիրավ ու լիարժեք հոլովներ են։

Ավելին պետք է ասել. հայ քերականության պատմության մեջ Ստ. Պալասանյանը առաջինն է նշել և այն, որ ըստ իրենց արտահայտած հարաբերությունների բնույթի հայերենի հոլովները լինում են երկու տեսակ՝ անկախ և կախյալ, որ «նոցանից երկուսը՝ ուղղականն ու կոչականը անկախ», իսկ մյուսները, «կախյալ կամ թեք հոլովներ են»[42]։

Նկատելի է, որ Ստ. Պալասանյանը առանձնակի ուշադրություն է դարձրել հատկապես ձևով իրար նման հոլովներին, ըստ էության համարել դրանք տարբեր բառաձևեր՝ ասելով, օրինակ. «Եթե հոլովների վրա ուշադրություն դարձնենք, կտեսնենք, որ մի քանի հոլովների համար միևնույն հարցերը և հարցերի հետ միևնույն վերջավորությունները գործ են ածվում. այսպես անշունչ առարկաների համար վարվող ինչ հարցը գործ է ածվում ուղղականի, միանգամյան հայցականի համար, որոնք միմյանց նման են, այսինքն անվան սկզբնական ձևովն են դրվում. ում և ինչի վարվում են սեռականի և տրականի համար, որոնք նույնպես միմյանց նման են վերջավորությամբ։ Նույն ում հարցը գործ է դրվում և՛ հայցականի համար, երբ խոսքը մարդկանց անունների վրա է, և՛ այն ժամանակ հայցականը սեռականի և տրականի նման է վերջավորությամբ։ Այս նույնավերջ հոլովները միմյանցից որոշելու միայն հնարք կա—քննել, թե նոցանից յուրաքանչյուրը ի՞նչ պաշտոն է վարում և կամ ի՞նչ մտքով է վարված նախադասության մեջ»[43]։

Ձևով նման հոլովները իրարից տարբերելու մանկավարժական-մեթոդական հիշյալ «հնարքը» առաջադրելով՝ Ստ. Պալասանյանը հոլովի շարահյուսական պաշտոնը կամ կիրառությունը երբեք էլ նրա որոշման հիմնական հիմունք չի համարել, ինչպես որ կարծում են սեռականն ու հայցականը մերժողներից ոմանք մեր օրերում։ Պալասանյանը ավելի խորն է ըմբռնել հոլովի, իբրև անվան քերականական կարգի, էությունը, հոլովների շարահյուսական կիրառությունները բացատրել է նրանց արտահայտած հարաբերություններով, միաժամանակ հոլովը քարացած քերականական կարգ չի համարել և նկատել ու նշել է, որ ժամանակի ընթացքում հայերենի հոլովները որոշ փոփոխություններ են կրել և գնացել դեպի պարզեցում։

Գտնելով, որ «...նոր լեզվի հոլովները, համեմատելով հնի հետ, շատ ավելի պարզ են և ձևերը տարբեր հնից և ըստ մասին արևմտյան դրական լեզվից»[44], Ստ. Պալասանյանը հին լեզվի՝ գրաբարի և նոր լեզվի՝ աշխարհաբարի հոլովների սերտ կապերն ու աղերսները, ընդհանրություններն է

---

39 Ստ. Պալասանյան. Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1884, էջ 38։

40 Նույն տեղում։

41 Նույն տեղում։

42 Ստ. Պալասանյան. Ընդհանուր տեսություն..., էջ 44։

43 Ստ. Պալասանյան. Քերականություն մայրենի լեզվի, էջ 40։

44 Ստ. Պալասանյան. Ընդհանուր տեսություն..., էջ 24։

ճիշտ ըմբռնել, նրանց և հետևաբար՝ նաև հայցականի ու ուղղականի, սեռականի ու տրականի արտահայտած հարաբերությունները երկու դեպքում էլ նույն է համարել, համմտ., օրինակ, Քաղաք մեր է յոյժ գեղեցիկ և Մեր քաղաքը շատ գեղեցիկ է, Բազումք անցանեն ընդ փողոցս քաղաքի մերոյ և Շատերն են անցնում մեր քաղաքի փողոցներով, Թշնամիք վնասս պատճառէին քաղաքի մերում և Թշնամիները վնասներ էին պատճառում մեր քաղաքին, Ո՞ ոչ սիրէ զՔաղաք մեր և Ո՞վ չի սիրում մեր քաղաքը: Այսպիսով՝ աշխարհաբարի հոլովների կազմում նա զուտ ձևաբանական փոփոխություն է տեսել՝ նշելով, որ «մասնավոր ուշադրության արժանի է շնչավոր առարկաների հայցականը, որը որոշյալ հոդով հոլովվելիս՝ տրականի հետ նույնանում է. Շանը ծեծից և Շանը բան չի տալու ուտելու։ Հիվանդին բժշկից և Հիվանդին հրամայված է տանը մնալ», «Այս տրականավերջ հայցականի հետ շատ անգամ սեռականն էլ է նույնանում»[45]։

Ստ. Պալասանյանը, սակայն, ոչ միայն աշխարհաբարի հոլովներից հայցականի՝ և՛ ուղղականի, և՛ սեռականի, սեռականի՝ և՛ տրականի, և՛ հայցականի հետ ձևով նույն կամ նման լինելն է մատնանշել, այլև ցույց է տվել, թե ի՛նչու և ի՛նչպես է առաջ եկել տրականաձև կամ տրականավերջ հայցականը։

Փաստերով հավաստելով, որ «տրականաձև հայցականը նոր երևույթ չէ մեր լեզվի մեջ, ինչպես ոմանք զուցե կարծում են»[46], Պալասանյանը դա համարում է անհրաժեշտաբար առաջ եկած պատմական իրողություն։

Այսպես՝ նա գրում է. «Անձի անունները որոշյալ հոդով հոլովվելիս՝ հայցականը տրականի հետ նույնանում է։ Այսպես ասում են՝ Հայրը սիրում է որդուն: Կիրակոսը տեսավ Մարկոսին. որ եթե ասեինք՝ Կիրակոսը տեսավ Մարկոսը, չէր իմացվիլ, թե Կիրակոսն է տեսնողը թե Մարկոսը»[47]։ Ի հավելումն դրան, նա նաև նկատել է, որ «Տրականաձև հայցականի գործածությունը ավելի հաստատություն ստացավ այն ժամանակ, երբ հոլովակերտ նախդիրները դուրս ընկնելով և հայցականը ուղղականի հետ նույնանալով՝ մտքի շփոթություն կարող էր պատճառել»[48]։

Այսպիսով՝ արևելահայ դրական լեզվում ձևավորվում են անձի և իրի, ինչպես նաև որոշյալի և անորոշի առման քերականական կարգերը՝ արտացոլում գտնելով Պալասանյանի քերականական աշխատություններում։ Շնչավոր և անշունչ առարկաները տարբերակելով իրարից՝ Պալասանյանը շնչավորներից առանձնացրել է անձ նշանակող գոյականները և նշել, որ դրանք մյուսներից տարբերվում են իրենց տրվող ո՞վ (ո՞ւմ, ումի՞ց, ումո՞վ) հարցով։

Արժեքավոր, գնահատելի է և այն, որ նա այդ երկու՝ անձի և իրի, որոշյալի և անորոշի առման քերականական կարգերը ներկայացրել է իբրև իրար հետ կապված իրողություններ, ճշտորեն է որոշել հոդերի (որոշյալ և անորոշ) դերը հոլովական համակարգում՝ փաստելով, որ «Նոր հայերենի մի առանձին հասկացությունն էլ հոդերն են, որոնք դրվելով անունների վրա՝ որոշ նշանակություն են տալի նրան»[49]։

Այս և այլ դեպքերում Պալասանյանի համար հիմնակետ ու ուղեցույց է ծառայել արևելահայ գրական լեզուն, որի յոթ հոլովի գոյությունը հիմնավորելով՝ նա զգալի չափով առաջ է տարել նրանց ուսմունքը և դրել մի նոր աստիճանի վրա։

Դա հավասարապես վերաբերում է նաև դերանուններին, որոնց հոլովները Պալասանյանը նույնպես որոշել է նրանց փոփոխված ձևերի արտահայտած հարաբերություններով, ձևով նման հոլովները նույնպես առանձին հո-

---

45 Նույն տեղում, էջ 41։

46 Նույն տեղում։

47 Ս տ. Պ ա լ ա ս ա ն յ ա ն. Քերականություն մայրենի լեզվի, մասն երկրորդ, էջ 39։

48 Ս տ. Պ ա լ ա ս ա ն յ ա ն. Ընդհանուր տեսություն.... էջ 41։

49 Նույն տեղում, էջ 88։

լովներ է համարել (հմմտ. ուղղ. ո՞վ, հայց. սեռ. տր. ո՞ւմ, ուղղ. ի՞նչ, հայց. ի՞նչ, սեռ. տր. ինչի՞), նշել, որ անձ ցույց տվող դերանունները հենց այդ պատճառով բացառապես տրականին են նման լինում, հմմտ. ես—իմ (սեռ.)—ինձ (տր.)—ինձ (հայց.), մենք—մեր (սեռ.)—մեզ (տր.)—մեզ (հայց.), դու—քո (սեռ.)—քեզ (տր.)—քեզ (հայց.), դուք—ձեր (սեռ.)—ձեզ (տր.)—ձեզ (հայց.)։

Իր հոլովական տեսությամբ առավելապես գործնական-ուսուցողական նպատակներ հետապնդելով՝ Պալասանյանը մատչելիորեն բացատրել է ձեռվ ինչպես տարորոշվող (բացառական, գործիական, ներգոյական), այնպես էլ չտարորոշվող հոլովների (ուղղական, սեռական, տրական, հայցական) թե՛ ընդհանուր նշանակությունները, թե՛ շարահյուսական հիմնական կիրառությունները և, օրինակ, նշել, որ «1. Ուղղական հոլովը անվան սկզբնական ձևն է, որ հայտնում է, թե ով է կամ ինչ է խոսակցության առարկան, և այս պատճառով պատասխանում է այս հարցերին. ո՞վ և ի՞նչ:

2. Հայցական հոլովը ցույց է տալիս գլխավորապես, թե մեկ առարկա ուրիշ առարկայի գործողությանն է ենթարկվում և պատասխանում է այս հարցերին. ո՞ւմ և ի՞նչ:

3. Սեռական հոլովը ցույց է տալիս թե մեկ առարկա ումն է կամ ինչից է առաջ գալիս, սերվում է, և պատասխանում է այս հարցերին. ո՞ւմ և ինչի՞ կամ ի՞նչ բանի:

4. Տրական հոլովը ցույց է տալիս թե մեկ բան ումն են ընծայում, տալիս, և պատասխանում է այս հարցերին—ո՞ւմ և ինչի՞ կամ ի՞նչ բանի»[50]:

Այսպիսով՝ Ստ. Պալասանյանը միանգամայն ճշտորեն է պատկերել արևելահայ գրական լեզվի հոլովական համակարգը, բացատրել յուրաքանչյուր հոլովի դերն ու արժեքը, նշել, որ հոլովումները որոշվում են «գլխավորապես եզակի սեռականի վերջավորություններով»[51], ինչպես նաև ցույց է տվել, թե հնչյունական ի՛նչ փոփոխություններ են կրում գոյականները թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով հոլովվելու ժամանակ։

Այս բոլորից բացի, նա անդրադարձել է նախադրություններին՝ կապերին, նաև նշել, որ ինչպես հոլովները, այնպես էլ դրանք «ցույց են տալիս առարկաների մեջ եղած հարաբերությունները», այն տարբերությամբ միայն, որ «Հոլովները ցույց են տալիս առհասարակ առարկաների մեջ եղած ընդհանուր հարաբերությունները, իսկ նախադրությունները նոցա մասնավոր բարակությունները»[52]։

Հոլովները և կապերը առարկաների միջև եղած հարաբերությունները արտահայտելու միջոցներ համարելով՝ Պալասանյանը միաժամանակ՝ ա) նրանց տարբերություններն է բացատրել, բ) հիմնականում ճիշտ է որոշել, թե որ հոլովներն են՝ որ կապի խնդիր են լինում, և որ կապերն են՝ որ նրանցից յուրաքանչյուրի, ասենք, սեռականի, տրականի, հայցականի, բացառականի և անգամ՝ ուղղականի հետ են գործածվում[53]։

Այս ամբողջն էլ պարզորոշ ցույց է տալիս, որ Ստ. Պալասանյանը իսկապես ճշտորեն է որոշել, ըմբռնել ու լուսաբանել արևելահայ գրական լեզվի հոլովները, գիտականորեն հիմնավորել ու հաստատել, որ նրանք իսկապես յոթն են և անվիճելիորեն ունեն ճանաչողական, տեսական ու գործնական մեծ արժեք։

Եվ ամենևին էլ պատահական չպետք է համարել, որ նա ունեցավ իր հետևորդ մի շարք քերականները, որոնք նույնպես ընդունել և իրենց հերթին հաստատել են յոթ հոլովի գոյությունը արևելահայ գրական լեզվում։

---

50 Ստ. Պալասանյան. Քերականություն մայրենի լեզվի, էջ 38—39։

51 Նույն տեղում, էջ 24։

52 Նույն տեղում, էջ 73։

53 Տե՛ս նույն տեղում, էջ 98—100։

Նրանցից առաջինը Առաքել Բահաթրյանցն է (1848—1883), որը Պալասանյանի «Քերականություն...»-ից մի քանի տարի հետո հրատարակած իր «Քերականություն աշխարհիկ լեզվի, Շրջան Ա» գրքում շատ պարզ ու դյուրամատչելիորեն բնութագրել է նոր հայերենի բոլոր հոլովները՝ սահմանելով այսպես՝ «Գոյականի... յոթ ձևերը, որոնք պատասխանում են յոթը հարցերին (ո՞վ, ի՞նչ–ո՞ւմ, ինչի՞—ո՞ւմ, ինչի՞—ո՞ւմ, ի՞նչ—ումնի՞ց, ինչի՞ց,—ումնո՞վ, ինչո՞վ—ումնո՞ւմ, ինչո՞ւմ), կոչվում են հոլով»[54]:

Հոլովներին տրվող այդ հարցերին համապատասխան էլ նա ներկայացրել է նրանց հարացույցը՝ ասելով, թե «Այդ հոլովները քերականական լեզվով կոչում ենք այսպես.

ո՞վ, ի՞նչ հոլով	— ուղղական
ո՞ւմ, ինչի՞ հոլով	— սեռական
ո՞ւմ, ինչի՞(ն) հոլով	— տրական
ո՞ւմ, ի՞նչ հոլով	— հայցական
ումնի՞ց, ինչի՞ց հոլով	— բացառական
ումնո՞վ, ինչո՞վ հոլով	— գործիական
ումնո՞ւմ, ինչո՞ւմ հոլով	— ներգոյական»[55]:

Այս ամենով, որ արտաքուստ կարող է շատ պարզունակ թվալ, Ա. Բահաթրյանցը ցույց է ավել, որ՝ ա) ուղղականն ու հայցականը, սեռականը, տրականն ու հայցականը, հայցականն ու տրականը թեև ձևով նման են, բայց տարբեր նշանակություններ են արտահայտում և, բնականաբար, տարբեր հոլովներ են, բ) շնչավոր և անշունչ առարկաները տարբերվում են դրանց տըրվող հարցերով. «ով վերաբերում է շնչավոր (ճիշտ կլիներ՝ եթե ասվեր՝ անձ նշանակող—Ա. Մ.), ի՞նչ անշունչներին», և «շնչավոր առարկաներումը ուղղականը համապատասխանում է ո՞վ հարցմանս, սեռականը, տրականը և հայցականը՝ ո՞ւմ հարցմանս, իսկ անշնչավորներում ուղղականն ու հայցականը ի՞նչ հարցմանս, սեռականն ու տրականը՝ ինչի՞ հարցմանը»[56], գ) դերանունները նույնպես հոլովվում են յոթ հոլովով, բայց որոշ դեպքերում եթե սեռականը տարբերվում է տրականից (ինչպես՝ ես—իմ—ինձ, մենք—մեր—մեզ, դու—քո—քեզ, դուք—ձեր—ձեզ), ապա հայցականն ու տրականը միշտ նման են լինում իրար (ինչպես՝ ես—իմ—ինձ—ինձ, մենք—մեր—մեզ—մեզ):

Ա. Բահաթրյանցը, ճիշտ է, պարզորոշ չի պատկերացնում ու պատկերում անձի և իրի, որոշյալի և անորոշի առումները և Պալասանյանի մեկնություններին առանձնապես շատ նոր բան չի ավելացնում, բայց, որ տվյալ դեպքում կարևոր է, նա ես ձևով նման հոլովները առանձին ու ինքնուրույն հոլովներ է համարում և իր հերթին հաստատում յոթ հոլովի գոյությունը արևելահայ գրական լեզվում։

Իսկ ինչպես Ստ. Պալասանյանի, այնպես էլ նրա հետևորդ քերականների հոլովական տեսությունը արժեքավորվում է նրանով, որ գոյականի փոփոխության ձևով և նշանակությամբ որոշելով հոլովները՝ նրանք հաստատում են, որ դրանք իսկապես յոթն են։

Ա. Բահաթրյանցից հետո դա շատ պարզ ու որոշ է ներկայացրել քերական Նիկ. Տեր-Ղևոնդյանը (1848—1920), որը 1883—1906 թթ. ընթացքում

---

54 Ա. Բահաթրյանց. Քերականություն աշխարհիկ լեզվի. Շրջան Ա, Տփխիս, 1879, էջ 42։

55 Նույն տեղում, էջ 42։

56 Նույն տեղում, էջ 43։

Ց անգամ հրատարակած իր «Մայրենի լեզվի քերականության տարերքը» գրքում գրում է. «Անունների վերջավորության փոփոխությունը կոչվում է հոլով:

Անուները յոթը ձևով կարող են փոփոխել իրանց վերջավորությունը (ընդգծումն իմն է—Ա. Մ.). ուրեմն հոլովներն էլ յոթն են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, ներգոյական, գործիական»[57]:

Այդ հիմունքով էլ նա որոշել է հայերենի ոչ միայն ձևով տարբեր, այլև նման հոլովները՝ նշելով, որ՝ ա) «Անվան անփոփոխ ձևը կոչվում է ուղղական հոլով», բ) «Հայցական հոլովը ձևով նման է ուղղականին», գ) «Ուղղական հոլովն իմացվում է հարցերովս՝ ո՞վ, ի՞նչ, իսկ հայցականը՝ ո՞ւմը, ի՞նչը և ո՞ւր», դ) «Անվան այն ձևը, երբ նա ցույց է տալիս, թե առարկան ո՞ւմն է կամ ինչինն է, կոչվում է սեռական հոլով (աղավնու, ձկան մարմինը)», ե) «Տրական հոլովը ցույց է տալիս ում կամ ինչին ենք մենք որևէ բան տալիս», «Տրական հոլովը ձևի կողմից հոդով է միայն զանազանվում սեռականից»[58]:

Այդ բոլորի հետ մեկտեղ Նիկ. Տեր-Ղևոնդյանը հատուկ ուշադրություն է դարձրել արևելահայերենում հայցական հոլովի ձևավորմանը և դրա յուրահատկությունը նկատի ունենալով՝ նշել, որ՝ ա) «...աշխարհաբար լեզուն որոշյալ բառերի հոլովման մասին մի հիմնական կանոն ունի, այն է, որ մարդկանց հատուկ և հասարակ անունները, եթե որոշյալ հոդ ունին, հայցական հոլովում փոխանակ ուղղականին նման լինելու, նմանվում են տրականին, փոխանակ ասելու «Ես տեսա իմ հայրը», ասում ենք՝ «Ես տեսա իմ հորը»[59]. կամ՝ «Մարդկանց հատուկ և հասարակ անունները որոշյալ հոդով հոլովվելիս՝ հայցականը նման պիտի լինի ոչ թե ուղղականին, այլ տրականին»[60], բ) «Հայցական հոլովը միշտ ուղղականին է նման, եթե անշունչ առարկայի տեղ է դրված, իսկ եթե դրված է շնչավորի տեղ, ապա նման է տրականին»[61], գ) «...դոյական դերանունները որոշյալ են, այնպես որ հոլովվելիս հայցականը միշտ նման է լինում տրականին և ոչ ուղղականին»[62]:

Այսպիսով՝ Նիկ. Տեր-Ղևոնդյանը անձի և իրի առման հարցում մի քայլ առաջ է անցնում նախորդ քերականներից, նշում, որ հայցական հոլովը տրականին նման է լինում նաև շնչավոր և ոչ շնչավոր առարկաների դեպքում, եթե դրանք որոշյալ ձևով, այսինքն անձի իմաստով են գործածվում, հմմտ., օրինակ, «Լովը մորթեցին» և «Կովին մորթեցին»:

Նախորդ քերականների համեմատությամբ Նիկ. Տեր-Ղևոնդյանը ավելի պարզ է ներկայացրել նախադրությունների՝ կապերի խնդրառությունը, ցույց տվել, թե նրանցից որը որ հոլովի հետ է գործածվում, որ կապերն են (հետ, մոտ, պես, համար...), որ և՛ սեռականով, և՛ տրականով խնդիր են առնում (հմմտ. իմ մոտ—ինձ մոտ, իմ համար—ինձ համար, քո պես—քեզ պես, ձեր հետ—ձեզ հետ և այլն), ինչպես նաև իր հերթին վկայել, որ «...գոյականից առնված նախադրությունները սեռական հոլով են առնում և նրա հետ էլ հոլովվում են՝ ծառի տակը, կտրի վրա, իմ առաջը, իմ առաջի, իմ առաջից...»[63]:

Ստ. Պալասանյանին հետևորդ հաջորդ քերականը Ներսես Մելիք-Թանգյանն է (1866—1948), որը հիշյալ քերականությունների գործածության

---

57 Ն. Տեր-Ղևոնդյան. Մայրենի լեզվի քերականության տարերքը. Թիֆլիս, 1883, էջ 62։

58 Նույն տեղը, էջ 62—64։

59 Նույն տեղում, էջ 111։

60 Նույն տեղում, էջ 81։

61 Նույն տեղում։

62 Նույն տեղում, էջ 78։

63 Նույն տեղում, էջ 123։

շրջանում հրապարակել է իր «Աշխարհաբարի քերականությունը (ամբողջությամբ)» իբրև դպրոցական դասագիրք՝ վկայելով, թե դա կազմել է «սուղ ժամանակում»՝ առաջնորդ ունենալով «գլխավորապես Այտընյանի քերականությունը և հայոց ու ռուսաց գործածվող ձեռնարկները»[64]։

Ն. Մելիք-Թանգյանը նույնպես արևելահայերենի հոլովները 7-ն է համարել և գոյականը բնութագրելով 34 կետով՝ դրանցից 9-ը հատկացրել է նրանց և, օրինակ, նշել, որ «20. Գոյականի... առանձնակի փոփոխությունը կոչվում է հոլով», «21. Գոյականի սկզբնական ձևը, որի վրա ածանց (իմա՛ հոլովակազմիչ մասնիկ—Ա. Մ.) չի ավելանում, կոչվում է ուղղական հոլով (առաջին փոփոխություն). Տան է քանդվել..., Մարդ եկավ», «23. Անորոշ ուղղականի վրա եթե ի, ան, ու ածանցները (՞) ավելացնենք, այն ժամանակ կստանանք գոյականների երկրորդ փոփոխությունը, որ ցույց է տալիս մի որևէ անվան պատկանելությունը, օր.՝ տախտակի կեսը, մարդու պատկեր...», «24. Սեռականի ածանցները (՛) կազմում են և երրորդ—տրական հոլովը, որ ցույց է տալիս գործողության պատկանելությունը. նա ծեծի արժանի է։ Վարդը ընծայեցի Նրան», «29. Անորոշ ուղղականի նման է և 7-րդ հոլովը—հայցականը. որոշյալ հայցականը նման է որոշյալ ուղղականին։ Ես մարդ տեսա։ Ես փայտ տեսա. ի՞նչ: Ես փայտը տեսա. Ես եզը տեսա. ի՞նչը», «30. Հայցականը նման է տրականին, երբ մարդկանց անունները, անձնավորություն ցույց տվող բառերը որոշյալ են։ Օր.՝ Ես տեսա Ճորդ, մարդ, մարդուն, Պետրոսին: Բոլորը որոշյալ են և հայցականը—տրականի նման։ Իսկ եթե անորոշաբար գործածենք, ուղղականի նման կլինին հայցականները։ Օր.՝ Ես մի մարդ տեսա, որ որդու մահը ողբում էր»[65]։

Այսպիսով՝ Ն. Մելիք-Թանգյանը նույնպես հոլովները որոշել է գոյականի փոփոխված ձևով ու դրա արտահայտած ընդհանուր նշանակությամբ, նույնպես ձևով չտարբերոշվող հոլովները՝ ուղղականը, հայցականը, սեռականը, տրականը, առանձին ու ինքնուրույն հոլովներ է համարել, ցույց տվել, թե որ դեպքում են նրանք ձևով նման և տարբեր լինում։

Ավելացնենք այսքանին, որ նա հոլովակերտ մասնիկները հոլովացուցիչներ (սեռականացուցիչ, տրականացուցիչ, բացառականացուցիչ...) է անվանել, գոյականների և դերանունների հոլովական հարացույցում, ընդունված կարգին հակառակ, հայցականը վերջում իբրև 7-րդ հոլով է ներկայացրել, իսկ փոխանուն ածականների և թվականների հոլովման ժամանակ չի խախտել այն, տարբեր հոլովների մի շարք շարահյուսական պաշտոններն է նշել և այլն։

Ուշագրավ է և՛ այն, որ Մելիք-Թանդյանը հավելադիր կարգով անդրադարձել է նաև «Տաճկահայոց աշխարհաբարի հոլովմանը» և ներկայացնելով փայտ, դլուխ (Ու. Հ. փայտ, գլուխ, Ս. փայտի, գլխու, Տ. փայտի, դլխու. Բ. փայտէ, գլխէ, Գ. փայտով, գլխով), ես (Ու. ես, Ս. իմ, Հ. զիս, իս, Տ. ինձ, Բ. իզմէ, Գ. իզմով) բառերի հոլովական ձևերը՝ փաստորեն ցույց տվել դրանց տարբերությունները արևելահայ գրական լեզվի հոլովական ձևերի համեմատությամբ։

Այդպես և արևելահայերենում 7 հոլով է ընդունել Ա. Արաբաջյանը, որը միաժամանակ հետևելով «ռուսերեն լեզվի ամենատարածված տարրական քերականություններին», իր կազմած «Տարրական քերականություն հայոց աշխարհաբար լեզվի» համառոտ ձեռնարկում ևս նշել է, որ «Գոյական անունները յոթն հոլով ունին, որոնք պատասխանում են հետևյալ հարցերին.

---

64 Ն. Մելիք-Թանգյան. Աշխարհարարի քերականությունը (ամբողջությամբ). Շուշի, 1893, էջ 23։

65 Նույն տեղում։

Ուղղ.	*ո՞վ, ի՞նչ*	— *աշակերտ, քար*
Սեռ.	*ո՞ւմ, ինչի՞*	— *աշակերտի, քարի*
Տր.	*ո՞ւմ, ինչի՞(ն)*	— *աշակերտի(ն), քարի(ն)*
Հյց.	*ո՞ւմ, ի՞նչը*	— *աշակերտին, քարը*
Բաց.	*ո՞ւմնից, ինչի՞ց*	— *աշակերտից, քարից*
Գործ.	*ումնո՞վ, ինչո՞վ*	— *աշակերտով, քարով*
Ներգ.	*ումնո՞ւմ, ինչո՞ւմ*	— *աշակերտում, քարում»*[66]։

Արարաչյանը նույն կերպ և համանման հարցույցով է ներկայացրել նաև դերանունների հոլովումը, ինչպես՝

Ուղ.	*ես*	*մենք*	*ինքն*	*ով*
Ս.	*իմ*	*մեր*	*իրա, իր*	*ում*
Տ.	*ինձ*	*մեզ*	*իրան*	*ում*
Հ.	*ինձ*	*մեզ*	*իրան*	*ում*
Բ.	*ինձանից*	*մեզանից*	*իրանից*	*ումնից*
Գ.	*ինձանով*	*մեզանով*	*իրանով*	*ումնով*
Ն.	*ինձանում,*	*մեզանում*	*իրա..ում*	*ումնում...*

Արևելահայ դրական լեզվի յոթ հոլովները և նրանց համակարգը շատ ավելի ցայտուն է պատկերել Հարություն Թումանյանը (1869—1943) իր «Հայոց աշխարհաբար լեզվի համառոտ ստուգաբանություն» դասագրքում, որ 1904—1915 թթ. ընթացքում հրատարակվել է հինգ անգամ և, բնականաբար, առավել մեծ նպաստ բերել մայրենի լեզվի ուսուցման գործին։

Հայ քերականագիտական մտքի մշակած ճիշտ սկզբունքները նկատի ունենալով՝ Հ. Թումանյանը ևս հոլովները որոշել է առարկաների միջև դրսևորվող հարաբերություններով և նշել, որ «Առարկաների մեջ եղած հարաբերությունները ցույց տալու համար գոյականները փոփոխում են իրանց վերջավորությունները. այդ փոփոխությունները կոչվում են հոլով (падеж):

Հոլովները յոթն են՝

1. Ուղղական	(именительный)	— *ո՞վ, ի՞նչ*
2. Հայցական	(винительный)	— *ո՞ւմ, ի՞նչ*
3. Սեռական	(родительный)	— *ո՞ւմ, ինչի՞*
4. Տրական	(дательный)	— *ո՞ւմ, ինչի՞*
5. Բացառական	(отложительный)	— *ումնի՞ց, ինչի՞ց*
6. Գործիական	(творительный)	— *ումնո՞վ, ինչո՞վ*
7. Ներգոյական	(местный)	— *ումնո՞ւմ, ինչո՞ւմ»*[67]։

Եվ այսպես՝ աշխարհաբարի նախորդ քերականների պես Հ. Թումանյանը ևս ձևով նման կամ պարզ չտարբերոշվող հոլովները առանձին ու ինքնուրույն հոլովներ է համարել և իր հերթին ցույց տվել, որ «Ուղղական հոլովը եզակի թվում չունի ոչ մի վերջավորություն։ ...Երբ ընդհանուր միտքը մասնավորի է փոխվում, ուղղական հոլովն ընդունում է ը (ն) *հոդը»․ «Սեռականը եզակի թվում ունի երեք տեսակ կանոնավոր վերջավորություն՝* ի *(հաց-*ի*),* ու *(գին-*ու*),* ան *կամ* եան *(ձկ-*ան*, բարութ-*եան*)», «Տրականը նման է սեռականին։ Հայցականը սովորաբար նման է ուղղականին։*

66 *Ա. Արարաչյան. Տարրական քերականություն հայոց աշխարհաբար լեզվի., Ալեքսանդրապոլ, 1903, էջ 16։*

67 *Հարություն Թումանյան. Հայոց աշխարհաբար լեզվի համառոտ ստուգաբանություն. Թիֆլիս, 1915, էջ 30։*

Բայց բանական առարկաների անունները (հայր, մայր, աշակերտ, զինվոր, խոհարար), երբ իրանց վերջում ունեն ս, դ, ն (ը) մասնիկը, հայցականում ընդունում են տրականի վերջավորություն։—Աշակերտիս, աշակերտիդ, աշակերտին:

Հայցականում տրականի վերջավորություն են ընդունում նաև այն հատուկ անունները, որոնք վերաբերում են մարդկանց։ —Արամին, Մարիամին, Լևոնին»[68]:

Այսպիսով՝ Հ. Թումանյանը միաժամանակ հայցականի երկընույթ կազմությունն է բացատրել և յոթ հոլովի համակարգով ներկայացրել ոչ միայն տարբեր հոլովումների պատկանող գոյականների, այլև փոխանուն ածականների (օր.՝ լավը-լավի-լավից-լավով-լավում. լավեր-լավերի-լավերից-լավերով-լավերում), դերանունների (օր.՝ Ո. ես, դու, Ս. իմ, քո, Տ. Հ. ինձ, քեզ, Բ. ինձանից, քեզանից, Գ. ինձանով, քեզանով, Ն. ինձանում, քեզանում և այլն) հոլովումը[69]։

Հոլովները յոթ են ներկայացված նաև Գր. Վանցյանի (1870—1908) երկիցս՝ 1906 և 1908 թթ. հրատարակված «Դպրոցական քերականությունում», որտեղ հոլովները որոշելով անվան կրած փոփոխություններով՝ նա նախորդ քերականների պես գտնում է, որ՝ ա) «Ուղղականը ցույց է տալիս բառի սկիզբը», բ) «Երբ առարկան ենթարկվում է մի գործողության, հայցական հոլով է...։ Առհասարակ նման է ուղղականին, երբեմն, երբ շնչավոր է և որոշյալ, նման է տրականին», գ) «Սեռականը ցույց է տալիս թե առարկան ումն է պատկանում և պատասխանում է ո՞ւմ, ինչի՞ հարցերին։ Վարդի թփեր թող բսնեն. Գրքի թուղթը պատռած է. Աշակերտի մատիտը կորավ», դ) «Տրականը ցույց է տալիս, թե մի առարկա ումն ենք տալիս, ինչին կամ ումն ենք ուղարկում կամ մոտեցնում։ Հարցերն են. ո՞ւմ, ինչի՞, ե՞րբ, ուտե՞ղ: Փողոցով անցնելիս ծառի գիպա, մարդու հանդիպեցա։ Հավն է թառին, ծիտն է ծառին...: Տրականը շատ անգամ նման է սեռականին[70]։

Ստ. Պալասանյանին հետևորդ վերջին քերականն էլ հայտնի բառարանագիր Հարություն Դաղբաշյանն է, որը Մ. Աբեղյանի քերականական աշխատություններից հետո՝ 1913 թ. հրատարակած իր «Արևելահայ աշխարհաբարի քերականությունը» գրքում հավաստել է յոթ հոլովի իսկությունը և դրանք ներկայացնելով ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական շարքով՝ տվել յուրաքանչյուրի պարզ սահմանումը, ինչպես՝ «1. Ուղղական հոլովը բառի սկզբնական ձևն է և ենթակայի հոլովն է. նա պատասխանում է ո՞վ և ի՞նչ հարցերին. ո՞վ է կարդում։ —Աշակերտը: Ի՞նչն է թանկ։ —Տետրակը», «2. Սեռական հոլովը պատկանելության հոլովն է և պատասխանում է ո՞ւմ, ի՞նչ հարցերին, օր. ո՞ւմ հայրը։ —Աշակերտի հայրը. ինչի՞ գինը։ —Տետրակի գինը», «3. Տրական հոլովը տալու հոլովն է և պատասխանում է ո՞ւմ, ինչի՞ն հարցերին։ Նա վերջանում է ն տառով, օր. ո՞ւմ տամ դիրքը։ —Գիրքը տուր աշակերտին. ինչի՞ն դիպար.։ —Ես դիպա տետրակին», «4. Հայցական հոլովը ներգործական բայի պահանջած հոլովն է և պատասխանում է ո՞ւմ, ի՞նչ հարցերին, օր. ո՞ւմ տեսար։ —Ես տեսա աշակերտին: Ի՞նչը վերցրիր։ —Ես վերցրի տետրակը»[71]:

Այսպիսով՝ Աշխարհաբարի ինչպես նախորդ քերականները, այնպես էլ Հ. Դաղբաշյանը ձևով նման կամ արտաքուստ հեշտորեն չտարբերվող հոլովները նույնպես ինքնուրույն ու անկախ հոլովներ է համարել և մատնանշել, որ «երբ խոսքը անորոշ առարկայի մասին է», տրականը հոդ չի առնում, «Շնչավոր և բանական առարկաների հայցական հոլովը նման է տրականին.

---

68 Նույն տեղում, էջ. 31։

69 Տե՛ս նույն տեղում, էջ 43, 46—49։

70 Գ ր. Վ ա ն ց յ ա ն. Դպրոցական քերականություն. Թիֆլիս, 1908, էջ 16—17։

71 Հ. Դ ա ղ բ ա շ յ ա ն. Արևելահայ աշխարհաբառի քերականությունը. Թիֆլիս, 1913, էջ 40—41։

իսկ անշունչներինը—ուղղականին, օր. Ես գիրքը (հայց. հոլով) տվի աշակերտին (տրակ. հոլով) և Ես տեսա աշակերտին (հայց. հոլ.)։

Իսկ եթե առարկան շնչավոր, բայց բանական չէ, նրա հայցականը սովորաբար նման է ուղղականին. օր. Մսագործը եզը (ոչխարը, կովը) մորթել էր եզը (հայց. հոլ.) կերել է, պոչից է խրտնում։

Երբ խոսքն անորոշ առարկայի մասին է, նույնիսկ բանական առարկայի հայցականը նման է լինում ուղղականին. օր. Այսօր ես տեսա մի աշակերտ (կամ մի աշակերտի), որը գրքեր էր առնում»[72]։

Այսպիսով՝ առ հարկի բերված բազմաշատ մեկնությունները, փաստերն ու տվյալները, ինչպես պարզ հայելու մեջ, ցույց են տալիս, որ աշխարհաբարի վաղ շրջանի քերականները Խ. Աբովյանից սկսած և վերջացրած Հ. Դաղբաշյանով, ապացուցել ու հաստատել են, որ արևելահայ գրական լեզվի հոլովները իսկապես յոթն են, որ ձևով ոչ միայն տարբեր, այլև նման հոլովները ևս ինքնուրույն ու առանձին հոլովներ են։

Ճիշտ ըմբռնելով արևելահայ գրական լեզվի հոլովական համակարգը և հիմնակետ ունենալով նրա կառուցվածքն ու օրինաչափությունները՝ նրանք ընդհանուր առմամբ՝

ա) Հոլովները որոշել են առարկաների միջև դրսևորվող հարաբերություններով, բ) յուրաքանչյուր հոլով դիտել են իբրև անվան առանձին փոփոխություն՝ իր համապատասխան ձևով և նշանակությամբ, գ) մատնանշել են հայերենի հոլովական համակարգում ժամանակի ընթացքում կատարված տեղաշարժերը և տեսնելով գրաբարի ու աշխարհաբարի հոլովների սերտ կապը՝ ցույց տվել, որ արևելահայ գրական լեզվի հոլովները իրենց արտահայտած հարաբերությունների տեսակետից եթե առանձնակի փոփոխություններ չեն կրել, ապա ձևավորմամբ կամ վերջավորություններով զգալապես տարբերվել են գրաբարի հոլովներից, դ) ճշտորեն՝ յոթ հոլովով են ներկայացրել նաև դերանունների հոլովումը, նշել, թե նրանցից որ դեպքում է, որ սեռականը լրիվ տարբերվում է տրականից, և որ դեպքում է, որ տրականը և հայցականը կամ սեռականը, տրականը և հայցականը ձևով միշտ նման են իրար, ե) նշմարել են գոյականների որոշյալի և անորոշի, անձի և իրի առման քերականական կարգերը՝ գտնելով, որ առաջիններն արտահայտվում են հոդի (որոշյալ և անորոշ), իսկ երկրորդները՝ հայցական հոլովի միջոցով, զ) որոշակիորեն հետապնդել են ուսուցողական նպատակներ և ինչպես ձևաբանության, այնպես էլ շարահյուսության մեջ յոթ հոլով ընդունելով՝ արդյունավետ ու նպատակասլաց դարձրել դրանց ուսուցումը։

Այսքանից, սակայն, չպետք է հետևցնել, թե նրանք աշխարհաբարի կամ նոր հայերենի հոլովները լուսաբանել են ամբողջ լայնքով ու խորությամբ կամ թե չէ՝ տվել են հոլովական բոլոր իրողությունների սպառիչ պատասխանը։ Ամենևի՛ն. հետապնդելով հիմնականում գործնական, ուսուցողական նպատակներ՝ աշխարհաբարի վաղ շրջանի քերականները գլխավորապես զբաղվել են նրա ամենակարևոր օրենքների ու կանոնների բացահայտմամբ և նաև միշտ չէ, որ կարողացել են թափանցել հոլովական իրողությունների մեջ, կատարել տեսական ընդհանրացումներ և կամ՝ զերծ մնալ առանձին սխալներից ու վրիպումներից։

Նկատելի է, որ, օրինակ, ոմանք շարունակել են կոչականը առանձին հոլով համարել՝ առանց հոլովական համակարգի մեջ առնելու, ոմանք այն առհասարակ հոլով չեն համարել, իսկ ոմանք էլ պարզապես ուղղականի արտահայտության մի ձև են համարել։

Այդպես և նրանք մեծ մասամբ աղոտ են պատկերել կապերի խնդրաությունը, սեռականի ու տրականի հետ գործածվող կապերը պարզորոշ չեն տարբերել իրարից և այլն։

---

72 Նույն անդում, էջ 41։

Աշխարհաբարի վաղ շրջանի քերականություններում բավարար չափով չեն բացահայտվել հոլովների առանձնահատկությունները, նրանց փոխկապակցությունները և հարաբերությունները, ինչպես նաև բազմազան իմաստները։

Բայց ինչպես դրանք, այնպես էլ այլ պակասությունները, սխալներն ու վրիպումները ամենևին չեն նսեմացնում այն ծառայությունը, որ վաղ շրջանի քերականները մատուցել են հայագիտությանը՝ ցույց տալով ու հաստատելով, որ արևելահայ աշխարհաբարի կամ արևելահայ գրական լեզվի հոլովները իսկապե՛ս ու իրապե՛ս յոթն են։

Դա, սակայն, ինչպես հայտնի է, ընդունելի չի համարել Մ. Աբեղյանը և հակառակ գնալով նրանց՝ արևելահայ աշխարհաբարի հոլովների վերաբերյալ ստեղծել է մի այլ յուրահատուկ տեսություն, որը և ենթակա է առանձնակի քննության[78]։

ПОНИМАНИЕ И ОСВЕЩЕНИЕ ПАДЕЖЕЙ АШХАРАБАРА В ГРАММАТИКАХ РАННЕГО ПЕРИОДА

Доктор филол. наук Ал. С. МАРКАРЯН

Резюме

В статье подробно рассматривается вопрос о том, как понимались и освещались падежи ашхарабара, или нового армянского языка, в грамматиках раннего периода. В своих грамматических трудах описанием и освещением падежей ашхарабара или нового армянского языка занимались грамматисты-арменисты: И. Шрёдер, М. Себастаци, Х. Абовян, А. Айдинян, Ст. Паласанян, А. Багратяиц, Н. Тер-Гевондян, Н. Мелик-Тангян, А. Арабаджян, А. Туманян, Гр. Вапцян и А. Дагбашян, которые, преследуя в основном практические—учебные цели, совершенно правильно представляли падежную систему ашхарабара. Определяя падежи по тем отношениям между предметами, явлениями действительности, которые выражаются изменяемыми формами склоняемых слов, они установили, что в новом армянском языке существует только семь падежей: именительный, родительный, дательный, винительный, отложительный, творительный и предложный (местный). В статье детально характеризуется деятельность в этой области каждого из упомянутых грамматистов-арменистов и оценивается тот вклад, который они внесли в арменистику, заняв достойное место в истории грамматики нового армянского языка.

78 Այդ մասին տե՛ս մեր՝ «Մանուկ Աբեղյանի հոլովական տեսությունը» հոդվածը.—ՊԲՀ, 1995, № 1—2, էջ 215—226։